Շատ անգամ՝ մանաւանդ առատ տարիներում՝ երբ արմտիքները ածան են լինում՝ գիւղացին ամենամեծ դժուարութեան մէջ է ընկնում՝ կապալառուները՝ կամ նորանց հետ դաշնակցած կառավարութիւնը նորանից տասանորդական տուրքը արմտիքով ստանալու փոխարէն՝ արմտիքի արժէքը փողն են պահանջում։ Գիւղացին ստիպուած է լինում խիստ պակաս գնով արմտիքը ծախել՝ պահանջած գումարը ձեռք բերելու համար։ Այդ վնասի հաշուովը գիւղացու վերայ տասանորդական տուրքը համարեայ տասին վեց է նստում։

Ամենից յետին կարգումը դասաւորվում են քրդաց հարստահարութիւնները՝ որոնց համար շատ անգամ աւելի խիստ խօսված և գրված է։

Դորանց բոլոր ճնշումը կայանում է գողանալումը՝ թալանելումը՝ վրէժխնդրութեան հոգով եղած հրդէհներումը։ Բացի այդ իւրաքանչիւր հայ գիւղացին քրդերից իւր «քրիվան» (կնքաւոր) ունի՝ որի սիրտը շահում է իւր ստացուածքի պաշտպանութեան համար։

Ես նորա համար քրդերի հարստահարութեանց նուազ նշանակութիւն եմ տալիս՝ որովհետև գիւղերում կատարված գործնական փորձերը ցոյց տուին՝ որ դա վաղանցուկ է՝ անդարմանելի չէ։ Այն գիւղերը՝ որոնք ապացուցին՝ թէ իւրեանք իւրեանց ապրանքին տէրն են